

ԿԱՐԳ ՊԱՇՏԱՄԱՆ ՃԱՇՈՒ

(Որ կատարի զկնի Հասարակաց Աղօթից Առաւօտեան Ժամուն, յորժամ Պատարագ ոչ մատչիցի):

Սարկաւագն.

Օրհնեա՛ Տէր:

Քահանայն.

Օրհնեալ թագաւորութիւնն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Ապա Դպիրքն ասացեն զԺԱՄԱՄՈՒՏ, ըստ պատշաճի ատուրն, ըստ ցուցանելոյ Տաղարանի կամ Ժամագրոցն:

Սարկաւագն ձայնեցէ զկնի Ժամամտին.

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.

Ընկալ, կեցո՛ր եւ ողորմեա՛:

Քահանայն.

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Յայնժամ Դպիրքն ասացեն զԾԱՇՈՒ ՓՈՒՍՆ եւ յետ այնորիկ երգեսցեն զԾԱՐԱԿԱՆ ԾԱՇՈՒ, ըստ պատշաճի ատուրն, ըստ ցուցանելոյ Տաղարանի կամ Ժամագրոցն:

Եւ ապա Սարկաւագն ձայնեցէ.

Պոռսխու՛մէ:

Եւ ապա Դպիրքն ըստ խորհրդոյ ատուրն երգեսցեն զԵրեքսրբեանն:

Զատկի, Յիսնանց եւ Յարութեան Կիրակէից.

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր. սուրբ եւ անմահ,

Որ յարեար ի մեռելոց,

Ողորմեա՛ մեզ:

Երիցս կրկնեսցեն:

Աստուածայայտնութեան եւ Վարդավառի.

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ,

Որ յայտնեցար վասն մեր,

Ողորմեա՛ մեզ:

Երիցս կրկնեսցեն:

Տեսաճընդատաշի, Հոգեգալստեան, Վերափոխման.
 Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ,
 Որ եկիր եւ գալոց ես,
 Ողորմեա՛ մեզ:
 Երիցս կրկնեսցեն:

Խաչի, Եկեղեցոյ, Սրբոց, Պահոց.
 Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ,
 Որ խաչեցար վասն մեր,
 Ողորմեա՛ մեզ:
 Երիցս կրկնեսցեն:

Եւ ի կատարելն Երեքսրբենոյն՝ Սարկաւազն քարոզեսցէ.

[Քարոզ Մեծ Ճաշոյ]

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:
 Դպիրքն. Տէր, ողորմեա՛:

— Վասն խաղաղութեան ամենայն աշխարհի եւ հաստատութեան սրբոյ
 Եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն. Տէր, ողորմեա՛:

— Վասն ամենայն սուրբ եւ ուղղափառ եպիսկոպոսաց, զՏէր
 աղաչեսցուք:

Դպիրքն. Տէր, Ողորմեա՛:

— Վասն հայրապետին մերոյ Տեառն . . . (աշս անուն) կենաց, եւ փրո-
 կութեան հոգւոյ նորին, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն. Տէր, ողորմեա՛:

— Վասն վարդապետաց, քահանայից, սարկաւազաց, դպրաց եւ
 ամենայն ուխտի մանկանց Եկեղեցւոյ, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն. Տէր ողորմեա:

— Վասն բարեպաշտ թագաւորաց եւ աստուածասէր իշխանաց,
 զօրավարաց եւ զօրաց նոցին, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն. Տէր ողորմեա:

— Վասն հոգւոցն հանգուցելոց, որք ճշմարիտ եւ ուղիղ հաւատով
 ի Քրիստոս ննջեցին, զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն. Յիշեա՛, Տէր, եւ ողորմեա՛:

— Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ, զՏէր
 աղաչեսցուք:

Դպիրքն. Տէր, ողորմեա՛:

— Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպիրքն. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

— Ողորմեա՛ց մեզ Տէր Աստուած մեր ըստ մեծի ողորմութեան քում. ասասցուք ամենեքեան միարանութեամբ:

Դպիրքն. Տէր, ողորմեա՛. Տէր, սղորեա՛. Տէր, ողորմեա՛:

Քահանայն.

[Աղօթք Բազկատարած]

Տէր Աստուած մեր, զբազկատարած զաղաչանս ծառայից քոց վերջն-կալցիս եւ ողորմեսցիս ըստ մեծի ողորմութեան քում: Զգթութիւն քո առաքեա՛ ի վերայ մեր եւ ամենայն ժողովրդեանս, որք ակն ունին առ ի քէն առատ ողորմութեանդ:

Զի ողորմած եւ մարդասէր ես Աստուած գոշով եւ քեզ վայելէ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Յայնժամ Դպիրքն երգեսցեն զԾԱՇՈՒ ՍԱՂՄՈՍԸ ըստ պատշաճի աւուրն, ըստ ցուցանելոյ Ժամագրոցն կամ Ծաշու Գրոցն:

Եւ ընթեռնուցուն ի գրոց ՄԱՐԳԱՐԷԻՅ, ըստ ցուցանելոյ Տօնացոցին կամ Ծաշու Գրոցն:

Ապա սաի ՄԵՍԵՂԻ ըստ պատշաճի, ըստ ցուցանելոյ Ծաշու Գրոցն կամ Ժամագրոցն:

Ապա ընթեռնուցուն ի գրոց ԱՌԱՔԵԼՈՅՑ, ըստ ցուցանելոյ Տօնացոցին կամ Ծաշու Գրոցն:

Ապա երգեսցեն ԱԼԼԼՈՒԻՒԱ, ըստ ցուցանելոյ Ծաշու Գրոցն կամ Ժամագրոցն:

Զկնի Ալէլուիային Սարկաւագն ձայնեսցէ.

Ալէլուիա. Օրթի:

Եւ Քահանայն դարձցի եւ խաչակնքեսցէ ի վերայ ժողովրդեանն, ասելով. † Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւագն.

Երկիւղածութեամբ լուարուք:

Քահանայն.

Սրբոյ Աւետարանիս որ ըստ (Մատթէոսի):

Դպիրքն.

Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

Սարկաւագն.

Պոռոսխումէ:

Դպիրքն.

Ասէ Աստուած:

Եւ ապա Քափանայն ընթեռնու զԱւետարանն, ըստ պատշաճի ատուրն, ըստ ցուցանելոյ ժաշու Գրոցն կամ Տօնացուցին:

Զկնի Աւետարանին Դպիրքն երգեսցեն.

Փառք քեզ, Տէր Աստուած մեր:

Եւ ապա ասեն զՆիկիական Դատանութիւնն ի լման.

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յարարիչն երկնի եւ երկրի, երեւելիաց եւ աներեւութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, աշխնքն յիութենէ Հօր:

Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած. նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս եւ ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք:

Որ յաղագս մեր՝ մարդկան եւ վասն մերոյ փրկութեան իջեալ ի յերկնից մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով:

Որով էառ մարմին, Հոգի եւ միտ եւ զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս եւ ոչ կարծեօք:

Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ. ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր ի դատել զկենդանիս եւ զմեռեալս. որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին, յանեղն եւ ի կատարեալն. որ խօսեցաւ յօրէնս եւ ի մարգարէս եւ յԱւետարանս:

Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յառաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբան:

Հաւատամք եւ ի մի միայն ընդհանրական եւ առաքելական [սուրբ] Եկեղեցի:

Ի մի մկրտութիւն յապաշխարութիւն՝ ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Ի յարութիւն մեռելոց. ի դատաստանն յաւիտենից Հոգւոց եւ մարմնոց. յարքայութիւնն երկնից եւ ի կեանսն յաւիտենականսն:

Մինչ ցայսր են հատատոյ բանք:

[Եզովք]

Իսկ որք ասենն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդին, կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ թէ յոչէից եղեն կամ յայլմէ հուփենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ եւ կամ զՍուրբ Հոգին, եւ թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթողիկէ եւ առաքելական սուրբ Եկեղեցի:

Քահանայն.

Լուսատրչէն ասացեալ.

[Փսաղտութիւն զկնի Հանգանակին]

Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս երկիրպագանելով սրբոյ Երրորդութեանն եւ մի Աստուածութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Զկնի Հաւատամքին Սարկաւագն քարոզեսցէ.

(Քարոզ զկնի Ընթերցուածոց)

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք.

Դպիրքն.

Տէր, ողորմեա:

Սարկաւագն.

Եւ եւս հաւատով աղաչեսցուք եւ խնդրեսցուք ի Տեառնէ Աստուծոյ եւ ի փրկչէն մերմէ Յիսուսէ Բրիստոսէ ի ժամուս պաշտաման եւ աղօթից, զի արժանի ընդունելութեան արասցէ, լուիցէ Տէր ձայնի աղաչանաց մերոց, ընկալցի զխնդրուածս սրտից մերոց, թողցէ զյանցանս մեր, ողորմեսցի ի վերայ մեր: Աղօթք մեր եւ խնդրուածք յամենայն ժամ մտցեն առաջի մեծի Տէրութեան նորա եւ նա տացէ մեզ միաբան միով հաւատով եւ արդարութեամբ վաստակիլ ի գործս բարիս. զի զողորմութեան զչնորհան իւր արասցէ ի վերայ մեր:

Տէրն ամենակալ կեցուցէ եւ ողորմեսցի:

Դպիրքն. Կեցո՛, Տէր:

— Զժամ սուրբ պատարագիս եւ զառաջիկայ օրս խաղաղութեամբ անցուցանել հաւատով ի Տեառնէ խնդրեսցուք:

Դպիրքն. Ծնորհեա՛, Տէր:

— Զհրեշտակ խաղաղութեան պահապան անձանց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:

Դպիրքն. Ծնորհեա՛, Տէր:

— Զբաւուրիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց ի Տեառնէ խնդրեսցուք:

Դպիրքն. Ծնորհեա՛, Տէր:

— Զարթոյ խաչին մեծ եւ կարող զօրութիւնն յօգնութիւն անձանց մերոց ի Տեառնէ՛ խնդրեսցուք:

Դպիրքն. Ծնորհեա՛, Տէր:

— Եւ եւս միաբան վասն ճշմարիտ եւ սուրբ հաւատոյս մերոյ զՏէր աղաչեսցուք:

Դպիրքն. Տէր, ողորմեա՛:

— Զանձինս մեր եւ զմիմեանս Տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Դպիրքն. Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

— Ողորմեա՛ց մեզ, Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. ասացուք ամենեքեան միաբանութեամբ:

Դպիրքն.

Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛:

Քահանայն.

[Աղօթք զԳնի Ընթերցածոց]

Տէր մեր եւ փրկիչ Յիսուս Քրիստոս, որ մեծդ եւ ողորմութեամբ եւ առատ պարգեւօք բարեբարութեան քոյ, որ դու քոյին կամաւդ ի ժամուս յայսմիկ համբրեցեր չարչարանաց խաչի եւ մահու յաղազս մեղաց մերոց եւ պարգեւեցեր առատապէս զպարգեւս Հոգւոյդ Սրբոյ երանելի առաքելոցն, հաղորդս արա՛ եւ զմեզ, Տէ՛ր, աղաչեմք զքեզ, աստուածային պարգեւացդ, թողութեան մեղաց եւ ընդունելութեան Հոգւոյդ Սրբոյ:

Որպէս զի արժանաւորք եղիցուք զոհութեամբ փառաւորել զքեզ ընդ Հօր եւ ընդ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

† Խաղաղութիւն ամենեցուն:

Դպիրքն.

Եւ ընդ հոգւոյդ քում:

Սարկաւազն.

Աստուծոյ երկրպագեսցուք:

Դպիրքն.

Առաջի քո, Տէր:

Քահանայն.

Խաղաղութեամբ քով Քրիստոս փրկիչ մեր, որ ի վեր է քան զամենայն

միտս եւ զբանս, ամրացո՛ղ զմեզ եւ աներկի՛ւղ պահեա՛լ յամենայն շարէ: Հաւասարեա՛լ զմեզ ընդ ճշմարիտ երկրպագուս քո, որք հոգւով եւ ճշմարտութեամբ քեզ երկիրպագանեն: Վասն զի ամենասուրբ Երրորդութեանդ վայելչ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Օրհնեա՛լ Տէր մեր Յիսուս Քրիստոս:

Դպիրքն.

Ամէն:

Սարկաւագն.

Օրհնեա՛, Տէր:

Քահանայն խաչակնքեսցէ ի վերայ ժողովրդեանն, ասելով.

Տէր Աստուած օրհնեսցէ զամենեսեանդ:

Դպիրքն երգեսցնն.

Միայն սուրբ, միայն Տէր, Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր: Ամէն:

Քահանայն.

Օրհնեալ Հայր սուրբ, Աստուած ճշմարիտ:

Դպիրքն. Ամէն:

— Օրհնեալ Որդիդ սուրբ, Աստուած ճշմարիտ:

Դպիրքն. Ամէն:

— Օրհնեալ Հոգիդ սուրբ, Աստուած ճշմարիտ:

Դպիրքն. Ամէն:

— Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Դպիրքն.

Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ:

Օրհնութիւն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Եւ այս անցէ Քահանայն զԱւետարանն սուրբ ի ձեռս իւր եւ կալով ի մէջ Եկեղեցւոյն, ասասցէ զաղօթս.

[Աղօթք Սրբոյն Ոսկերիւանի]

Որ օրհնես զայնոսիկ, որք օրհնեն զքեզ, Տէր, եւ սուրբ առնես զյուսացեալս ի քեզ:

Դպիրքն. Օրհնեալ է Աստուած:

— Կեցո՛ղ զժողովուրդս քո եւ օրհնեա՛լ զժառանգութիւնս քո, զլրումն Եկեղեցւոյ քո պահեա՛լ:

Դպիրքն. Ամէն:

— Սրբեա՛ զսոսա, որք ողջունեցին սիրով զվայելչութիւն տան քոյ. դու զմեզ փառաւորեա՛ աստուածային զօրութեամբ քով եւ մի՛ թողուր զյուսացեալս ի քեզ:

Դպիրքն. Ամէն:

— Զխաղաղութիւն պարգեւեա՛ ամենայն աշխարհի, հկեղեցեաց, քահանայից, թագաւորաց բրիստոնէից եւ զինուորեալ մանկանց նոցին եւ ամենայն ժողովրդեանս:

Դպիրքն. Ամէն:

— Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալք առ ի քէն, որ ես Հայր լուսոյ, եւ քեզ վայելչ փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Սարկաւազն երիցս ասացէ.

Եղիցի անուն Տեառն օրհնեալ յայսմհետէ մինչեւ յաւիտեան:

Քահանայն.

Կատարումն օրինաց եւ մարգարէից դու ես, Բրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ լցեր զամենայն հայրակամ տնօրէնութիւնս քո. լի՛ց եւ զմեզ Հոգւովդ քով սրբով:

Եւ Դպիրքն բազկատարած եղանակեսցեն.

Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո. եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազօրոջ տո՛ւր մեզ այսօր. եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց. եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն. այլ փրկեա՛ ի շարէ:

Քահանայն.

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս: Ամէն:

Քահանայն, խաչակնքելով ի վերայ ժողովրդեանն.

Օրհնեալք եղերուք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն:

Երթայք խաղաղութեամբ եւ Տէր եղիցի ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ: Ամէն:

Դպիրքն.

Ամէն:

Եւ երթիցեն ի խաղաղութիւն: